

**ԲԱՆԿԱՅԻՆ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՍԱԿԱԳՆԵՐ**

Ծառայություն	Սակագին
Հաճախորդի խումբ	բանկում ընթացիկ հաշիվ ունեցող ֆիզիկական անձինք
Խնայողական հաշվի արժույթ (այսուհետ՝ Հաշիվ)	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ ռուբլի
Հաշվի բացում և սպասարկման վճար	անվճար
Հաշվի բացման/համալրման նվազագույն միավոր, Հաշվի նվազագույն մնացորդ, Հաշվով գործարքների նվազագույն չափ, Կանխիկ գումարի մուտքագրում Հաշվին	չի սահմանվում
Համաձայն բանկային հաշվի համապատասխան սակագնային պլանի սակագների	Համաձայն բանկային հաշվի համապատասխան սակագնային պլանի սակագների
Հաշվով հնարավոր գործառնությունների տեսակներ և սահմանափակումներ	<p><u>Հաշվի համալրում՝</u></p> <ul style="list-style-type: none"> <li>❖ կանխիկի մուտքագրում</li> <li>❖ այլ հաշիվներից փոխանցում</li> </ul> <p><u>Հաշվից ելքագրում՝</u></p> <ul style="list-style-type: none"> <li>❖ փոխանցում հաճախորդի ընթացիկ կամ քարտային հաշիվներին</li> </ul>
Խնայողական հաշվից փոխանցում նույն հաճախորդի այլ հաշիվներին	անվճար
Տոկոսների հաշվարկման ձևը և հաճախականությունը	<ul style="list-style-type: none"> <li>❖ տոկոսները հաշվարկվում են օրական՝ տվյալ օրվա Հաշվի մնացորդի նկատմամբ:</li> <li>❖ եթե տվյալ օրվա Հաշվի մնացորդը փոքր է 20,000 ՀՀ դրամ, 50 ԱՄՆ դոլար, 50 Եվրոյից, 3,000 ՌԴ ռուբլուց, ապա այդ օրվա համար տոկոսներ չեն հաշվարկվում:</li> <li>❖ եթե տվյալ օրվա հաշվի մնացորդը գերազանցում է 130,000,000 ՀՀ դրամ, 250,000 ԱՄՆ դոլար, 250,000 Եվրո, 20 մլն ՌԴ ռուբլուց, ապա այդ օրվա համար տոկոսը հաշվարկվում է 130,000,000 ՀՀ դրամ, 250,000 ԱՄՆ դոլար, 250,000 Եվրոյի, 20 մլն ՌԴ ռուբլու նկատմամբ:</li> </ul>
Տոկոսների վճարումը	Հաշվարկված տոկոսները վճարվում են յուրաքանչյուր օրացուցային եռամսյակի ավարտից հետո՝ հաջորդ ամսվա 1-ին (հունվարի 1-ին, ապրիլի 1-ին, հուլիսի 1-ին, հոկտեմբերի 1-ին) և գումարվում են հաշվի մնացորդին (կապիտալացվում են): Վճարման օրը ոչ աշխատանքային լինելու դեպքում տոկոսները վճարվում են վճարման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Հաճախորդի կողմից մինչև եռամսյակի ավարտը հաշիվը փակելու դեպքում տոկոսագումարներ չեն վճարվում:

Տարեկան տոկոսադրույք	արժույթ	տարեկան անվանական տոկոսադրույք	տարեկան տոկոսային եկամտաբերություն
	ՀՀ դրամ	4.0%	4.07%
	ԱՄՆ դոլար	0.75%	0.75%
	Եվրո, ՌԴ ռուբլի	Բանկում «Ցպահանջ» ավանդի համար սահմանված տարեկան տոկոսադրույք	0.1%

**Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել խնայողական հաշվի նկատմամբ հաշվարկվող տոկոսների չափը՝ նախապես հաճախորդին ծանուցելով այդ մասին փոփոխություններն ուժի մեջ մտնելուց առնվազն 15 օր առաջ, եթե դիմում/պայմանագրով այլ բան նախատեսված չէ:**

**Տոկոսագումարի հաշվարկման օրինակ՝ (բերված օրինակում գումարները ներդրվում են 01.01.2016թ-ին, և ընթացքում չեն հանվում): Վճարվելիք տոկոսագումարից նվազեցվում է 10% եկամտահարկ:**

Ներդրված գումար (ՀՀ դրամ)	92-րդ օրը 4%	183-րդ օրը 4%	275-րդ օրը 4%	367-րդ օրը 4%
100,000	100,898	101,803	102,727	103,659
500,000	504,488	509,016	513,634	518,295
1,000,000	1,008,975	1,018,031	1,027,269	1,036,590

1. Սույն Սակագները և «Ինելոբանկ» ՓԲԸ Տնօրինության կողմից 29.02.2016թ-ին հաստատված «03-CN-06 Ինելոբանկ ՓԲԸ Բանկային սպասարկման հիմնական պայմաններ»-ը միասին հանդիսանում են Ինելոբանկ ՓԲԸ բանկային հաշվի ծառայության միասնական տեղեկատվական ամփոփագիր ֆիզիկական անձանց համար և հանդիսանում են «Բանկային ծառայությունների տրամադրման դիմում/ պայմանագիր (ֆիզիկական անձ հաճախորդների համար)» փաստաթղթի անբաժանելի մասը: Օգտագործվող հասկացություններն ունեն նույն իմաստը, ինչ Բանկային սպասարկման հիմնական պայմաններում:
2. Խնայողական հաշիվը նախատեսված է գումար խնայելու և կուտակելու համար: Բանկն իրավունք ունի տոկոսներ չվճարել խնայողական հաշվի մնացորդի դիմաց, եթե տվյալ գումարը չի մնացել Բանկում հաճախորդի հաշվին առնվազն 24 ժամ: Այն դեպքում, երբ Հաճախորդն օգտագործում է խնայողական հաշիվը անբարեխղճորեն՝ նպատակային նշանակության պարբերաբար խախտմամբ, Բանկն իրավունք ունի չվճարել սույն ծառայության սակագներով նախատեսված տոկոսները, կամ միակողմանիորեն փակել Հաճախորդի Հաշիվը, այդ մասին ծանուցելով հաճախորդին՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:
3. Հաշիվները բացվում են անժամկետ:
4. Հաշվի քաղվածքի և քաղվածքի կրկնօրինակի տրամադրումն իրականացվում է համաձայն ընթացիկ հաշվի սակագների:
5. Սահմանափակումների բացակայության դեպքում Բանկային հաշիվները փակվում են անվճար:

6. Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն: